26. ՈՃԼԻ ՆԱՂԱՐԵՆ ՈՒ ԱՐԱԲՈՒ ԼԱՄՈՒԿ

Ժամանակով մեյ թակավորմ կէլնի. թակավոր օրմ կէրթա ճանրկավոր ճյուր թափելու, ուր թոմբնի խոնջոտանցի վերեն իրեքյ խատ ոճիլ կկընդնի. չյունքի թակավոր չուր էն օր ոճիլ չէր տեսե, որ կտեսնա, կզարմանա: Էդ իրեքյ ոճիլ կպոնի ծեռ. կտանի կուտա ուր ախչկան. կասի. - Էսա վեր իմ թեռմբնին կընդա. առ պախի խենքյ վերչի վերչո էսոնքյ ինչխ կէլնեն:

Ախչիյն էլ կառնի կտնի մեչ շորին. կկապի. կփուլթի, կպախի:

Շատ ժամանակ կմնա. թե քիչ. ախչիկ օրմ շոր կառցկի, կաչկի, կտեսնա, որ էն իրեքյ ոճիլ մեյ մեկու կիրիր են, մնացե մեյ խատ. էն մեյն էլ շատ ի ճոճացե: Էն գյախ էտա մեյն կխանի, կտանի կուտա թակավորուն, կասի. - Իրեքյ մեյ մեկելու կիրիր են, մնացեր ի էսա մեյն. առ աչքի. խենքյ ի՞նչ կխասկնաս մոտեն:

Թակավորն էլ կառնի կաչքի, որ կտեսնա ոճիլ կայաթ ճոչ ի, կասի. - Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ, - կպիրի ոճիլ կմորթի, կաշի կքոթի, էնոր կաշուց մեյ խորոտ նաղարեմ կշինի: Նաղարեն էլ էն գյախ որ կզանի, ըսկուն սաստիկ ծեն կուտա, որ ծեն քյաղաքյ կպոնի:

Շատ կմնա, քիչ կմնա, էդա թակավոր կայաթ կախքտանա, կասի. - Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ խետ իմ ախքտութնին:

Կկանչի ուր քյաղաքյ ինչ կանդնար մարթ կա, կպիրի ուր քյեռշկ սարի մեչ, ոճլի նաղարեն կթալի առճվներ, կասի.

- Վով որ խանի՝ էսա նաղարեն ինչի՞ կաշի ի. ես պիտի իմ ախչիյ տամ ինոր, ամա, որ չխանեն, էսա կանդնար ոսկի կուզեմ էն մարթուց, որ չկիտնա, թե իմ նաղարեն ինչի՞ կաշիե ի:

Ժողովուրդն ի մեյ մեկ ուր խամար կուգյան կաչքի, կէրթան, շատ կմտածեն, չեն կանա խանե. թե նաղարի կաշին ինչի՞ կաշիե ի:

Թակավորն էլ ճմեն օր դրմի դրմի նաղարեն կզանի, ճարքյուշին կկանչի. ճամա վով ինչ կաչքի կէրթա. պամ չի խասկնա:

Սոն սոն ամրանբու լամուկ կուգյան: Արանբու լամուկ նաղարեն ծեռ պոնելուն պես կխանի, կասի. - Թակավոր ապրած կենա. քյո նաղարեն ոճլի կաշուց ի:

Թակավորն էլ պայման կանի խետ ամրանբու լամկուն. - Քյանի որ տյու կիցար իմ նաղարեն ի՞նչ էր, ես պիտի իմ ախչիկ տամ քյե:

Խոսք կուտա, ախչիկ կնշանի վեր ամրանբու լամկուն:

Թակավորն էլ՝ քյանի որ չկիցան էն մեկէլ աչքողներ նաղարեն ինչ էր. էնոնցից կաւաթ արծաթ ոսկի առեց. էլմ գյինա առաճվան պես զանգյնցավ:

Թակավորի ախչիկն էլ որ տեսավ խեր ուր նշանեց խետ ամրաբու լաճուն, շատ տրտմավ. շատ էլ մնուախ արաց. չյունքի ամրաբու լամուկ ինոր աչիչ ատելին էր: Հմեն օր կուլեր. կմոմոեր:

Օրմ աստծու խրամանքով ախչկա ծիյուն լեզու էլավ. թակավորու ախչկան ասաց. - Թե ինչի՞ հմեն օր կուլաս. կմոմոաս. էդաս կանդար մառախ կանես. քյո խոր խոսք որ կա՝ թակավորու խոսք ի. էն պայման որ արաց խետ արաբու լաճուն. էն ուր խոսքին պիտի տեր մնա. էլ չի կանա որ ուր խոսք ետ առնի, քյո մառախ ասնել. լալ. մոմոաղ. հմեն իզուր ի. մենա թե ականչ արա. քյե մեյ պան կասեմ. ինչխ կասեմ ըսկնա անես: Էն օր որ քյո խեր քյե կուտա արաբուն. էն խարսխուր գյալու օր, տյու քյո խոր ասա՝ ես իմ ծին պիտի տանեմ խե զիկ: Խեծի վեր իմ քյամկին. ինգյի խետ խարսխրին. մեյ ծեռքյ էլ մարթու խալավ պե խե քյե. չուր կես ճամխուն էն տեղ մեյ խատ տարմ կա. էն տարի մոտ տյու զի կայնցու: Էն զյանխ խարսխուր քյեզնից որ զատանան, ես քյե կառնեմ կթոնեմ, դոր որ տանեմ ես կիտեմ. իսկիմ էլ մի վախենա. էն գյանխ ես քյե կխասուցեմ քյո նպատակին:

Ծին կասի կպոծնի. թակավորու ախչիկն էլ ծին ինչխ էր ասե, ըսկուն ուր միտ կպախի:

Ծատ կմնա, քիչ կմնա, խարսխուր կուգյա ախչիկ տանելու:

Ախչիյն էլ հոր կասի. - Ես կխնթրեմ. որ ես իմ ծին խեծնի:

Կխեծի ուր ծին. կինի իտև խարսխրին չուր կես ճամբախ. որ կխասանեն էն տարի մոտ, թակավորի ախչիկ ուր ծին կբաշլայի կայնցուցել. հմ՛ գյամ կքյաշի. հմ՛ կթոնի. խարսխրի միլաթն էլ կասեն թե՝ ջա՛նմ, ախչիկ այալ ի. ավատա. որ ճյուր թափել կուգյմ էնոր. առճվանց կտորմ զատացեք, թո էն ուր ծին քշի, էրթմ ճամփից տյուս, ճյուր թամփի. էլմ կուգյմ կխասնի մե:

Ոյ ըսկուն կասեն, էնոնք մոճվանց կտորմ կզատանան տմրով էն իրես. ծին կառնի ախչկան, կթոնի, իսկի էլ չէրևա. թե դհր կէրթմ. ինչխ կէլնի: Էնոնք կնստեն տմրով էն իրես. ուրենց քյեֆ ուրախութեն կանեն:

Ծին կառնի ախչկան կփախնի, կտանի պանցր սարիմ գյլհխ կկայնի: Էն գյանխ ծին կասի ախչկան. - Ինա տիմացի մեշալը չայիր չիման կտեսնա՞ս, որ զատումանց կերևա:

Ախչիկն էլ կիրիշկա. կտեսնա, որ ուր տիմաց մեկ օրվա դուրան տեղմ կերևա:

Ծին կասի. - Տյու էճի տակ ըստեղ, քյո ախչկան խալվներ խան. մարթու խալավ խագյի. էլի մարթու կլըղ, ականջ արա, քյե ինչ կասեմ՝ իմ խմբրով արա:

Ախչիկ կփոխվի, կէլնի մարթու կլըղ:

Ծին կասի. - Ինա օրվա տեղ, էն չայիր չիման խորոտ տեսա՞ր:

Կասի. - Խա՛, տեսա:

Կասի. - Տյու խեծի վեր զի. զի կշի, սարբաստ կնա մտի մեչ էն չայիր չիմնին, էն մեոշալղի օրթեն կայնի: Էն տեղ թակավորու զորքեր. պահապաններ դմ կայնուկ են: Պիտի բոռան վեր քյե, պիտի թվանքյ պարզեն թեխ քյե. հմմմն տյու իսկի չվախենաս. իսկի-իսկի անդիշ չանես: Քյո տեղեն հիչ իրար չտեպանես: Էնտեղ կեճնես տակ, խանգյիստ կնստես քյո տեղ, ես իմ պերան կուտամ գյետին կարածամ. էնոնքյ ինչ որ կասեն, ինչ որ կանեն, իսկի-իսկի չերկյուղես:

Ես կարածամ, տյու եէլ սմրբմստ քյո տեղ կաց, էնոնքյ պիտի թակավորուն

ջուաբ տանեն. պիտի ասեն. թե մեյ մարթ էկավ. ուր ծին քշեց սարբաստ իպե, մտավ մեչ մեր չայիր-չիմնին. մեր մեշալղին նստավ: Մենք ինչ կանդար որ բոռացինք. ճչացինք, թվանք պարզիցինք ինե. վարհասըլի ինչ որ արինք. էն հիչ էն տեղրանք չէլավ, մեր արածներ, մեր զորքեր խիլմ չհաշվեց. էն չենք կիտե էս ինչ քաշասիրտ մարթ էր. որ ըսնա չվախեցավ. սարբաստ քշեց էկավ:

Թակավորն էլ պիտի ասի. - Մկա դա՞ էի էդա մարթ:

Էնոնք պիտի ասին. - Խա՛, դա էի:

Պիտի ասի. - Կնացեք շոտ էն մարթուն կանչեք թո գյան մո զիկ. ասեք թակավոր քյե կկանչի, թո էն գյա ես խետ էնոր խաբար կուտամ:

Համա, եթե որ թակավոր քյե կկանչի. կնա. իսկի չվախենաս. մենա թե որ քյե կասի. «Հիչ մեյ մարթ չէր իկի մեչ իմ չայիր չիմնին կայնե. տյու ի՞նչ քաջասիրտ մարթ ես. որ չվախեցար, քշեցիր իմ մեշալղի օրթեն կայնար, քյո ծին կապիցիր մեչ իմ չայիր չիմնին»: Տյու եէլ ասա. «Թակավոր ապրած կենա, ես ոչ քաջասիրտ եմ, ոչ էլ զոռլի եմ, մենայ թե ես խեղճ մեյ մարթմ եմ, զատու ճամբախ կուզյի, իմ ծին կայաթ անութցիր էր, քյո չայիր չիման որ տեսավ, մունչ դողրի քշվավ էկավ, ես էլ ի՛նչ կանդար որ արի, թե գյամ քյուշիցի. թե ի՛նչ կանդար որ արի. չկարցա իմ ծիու դիմաց առնի, ես էլ կարիբ ի, ճար ճամբախ չի կիտե: Ծին մո զիկ առեց, էկավ քյո չայիրի օրթեն կայնավ»: Էն գյախ թակավոր քյե պամ չանե. մենայ թե քյե պիտի ասի՝ չե՞ս էլնե իմ ծիայիտերաց սեյիս: Տյու եէլ ասա՝ կէլնեմ, ամա, ասա, թակավոր ապրած կենա, որ կաբուլ կանես. իմ ծին էլ խե քյո ծիայիտերաց շախեմ կելնեմ, թե չէ՝ չեմ էլնե: Չի չմոռնաս, որ մոռնաս՝ զմրմր կքյաշես:

Ախչիկ խորոտ ականշ արուց ծիյու խաբարներ, ինչխ ասաց, ըսկուն արաց:

Խալավավոխ էլավ, խեծավ ծին, քշեց կնաց էն օրվա չայիր չիմնի մեչ կայնավ: Էճավ տակ, խանգյիստ նստավ, ծին էլ բաշլայեց արածալ:

Թակավորու պահապաններ ինչ կանդար որ բոռացին, թվանքյ պարզիցին, ինչ որ արին, ախչիկ հեչ էնտեղրանքյ չէլավ:

Էլան շոյաբ տարան թակավորուն. թե ըսնա զոռլի մարթմ, թակավոր ապրած կենա, քշեց էկավ մեչ մեր մեշալղին, ինչ կանդար որ բոռացինքյ, թվանքյ պարզիցինքյ, էն իսկի-իսկի մեզնից անդիշ չարաց: Մենքյ ըսնա քաջասիրտ մարթ չենքյ տիսե:

Թակավորն էլ ասաց. - Էն մարթ մկա դա՞ էի ալա, թե՝ չէ:

Ասին. - Դա՝ էի, թակավոր ապրած կենա:

Ասաց. - Կնացեքյ շոտ կանչեքյ, թո գյան մո զիկ: Ասեքյ՝ արե թակավոր քյե շոտ կկանչի:

Էլան էկան, ասին. - Հե՛յ, կտրիճ երիտասարթ, էլի էրթանքյ, թակավոր քյե կկանչի:

Էն էլ էլավ թոավ ծիյու քյամակ, չում թակավորու քյեոշկ-սարեն մեկ քշեց: Կանց թակավորու մոտ, թամման դեմ էլավ:

Թակավոր որ տեսավ էտա երիտասարթ. շատ էլ խավնավ. ասաց՝ էսա ի՞նչ խորոտ երիտասարթմ ի:

Թակավոր խարցուց ինոր. - Տյու ի՞նչ զոռլի մարթմ ես, որ քշիցիր վամրբաստ մեչ իմ չայիր չիմնին կայնար, հիչ մեկ մարթ չէր գյիրիշմե մտներ մեչ իմ չայիր չիմնին: Տյու ի՞նչ կանդար կտրիճ իր, որ չվախեցար. կշիցիր չուր մեչ իմ մեշալղին կայնար:

Ախչիյն էլ ասաց. - Թակավոր ապրած կենա. ես ճամփորթ ի. զատ տեղե կուգյի. իմ ծին էլ կնյնթ անոթցիր էր. ես էլ կարիբ ի. չկիտե թե չայիր չիման թակավորուն էր. ճամբախ ո՞րն էր: Իմ ծին մո դողրի քշեց. ես ի՞նչխ որ արի. չկարցա իմ ծիու տիմացն առնի. զի առեց. էկավ չուր մեչ քյո չայիր չիմնին. պերան իդուր գյետին. քիչմ արածաց, ես էլ շատ ի նեղացի. նստա. ասի՝ կտորմ խանգյստանամ. էրթամ:

Թակավոր պամ չասաց էնոր:

Քյանիմ օր մնաց. թակավորն ասաց. - Տյու չե՞ս էլնի իմ ծիյայիտերաց սեյիս:

Ասաց. - Կէլնեմ. ինչ՞ի չեմ էլնե. ես էլ զաթի ընդունա պամ կփտոռեմ. որ անեմ. ապրեմ: Ամա, թակավոր ապրած կենա, քյե մեյ պամ ասեմ. որ կաբյուլ կանես՝ իմ ծին խետ քյո ծիյայիտերաց շախեմ, կէլնեմ քյե սեյիս. թե չէ՝ չեմ էլնե:

Թակավորն էլ ասաց. - Ջի քյառասուն ծի կա. թող քյու էլ էլնի քյառասուն մեկ. խետ իմ ծիյայիտերաց շախի:

Ախչիկ էլավ սեյիս թակավորուն:

Մենքյ ախչիկ թոնինքյ, խանբանր պիրենքյ վեր խաբսխընրեն:

Խարսխուրն էլ նստավ էն տանրի տակ, շատ քյեֆ ուրախութեն արին. ինչ կանդար որ աչկեցին. ախչիկ չէկավ, չէրևաց:

Ասին. - Ջանը՛մ, էսա շատ անգյնցավ. ի՞նչխ էլավ. որ էլ չէկավ, ինոր ճյուր թանփել էլավ ի՞նչ:

Էլանն տանրով էն իրես. ախչկան շատ փնտրեցին. չկնդան: Էնտեղեն չյուլաբ ճամխեցին ախչկան խոր տուն. ասին՝ թակավոր ապրած կենա, քյո ախչիկ տարանքյ չում կես ճանմխու, կնանց ճյուր թանփելու, մենքյ էլ նստանք մեր քյեֆ ուրախութեն արինքյ, ասինքյ չում գյան: Ծատ աչկեցինքյ. չէկավ. էլանքյ. որտեղ որ փտոռիցինքյ, որ քյարի տակ որ աչկեցինքյ, քյո ախչիկ չէրևաց, չէլնի էլմ տանոցե իկե տուն:

Թակավորն ասաց. - ՉԷ՛. ես խանբանր չեմ ախչկան մոտից. ես էն գյանխն եմ ախչիյ տեսա, ինչ տյու տարեր եք. էլ ես ախչիյ չեմ տիսե:

Փեոր փոշման տառցան կնանցին:

Թակավորն էլ էսա խանբանր լսելուն պես էլանվ կոպալմ պոնեց ուր ծեռ, տխուր տրտում սրտով ինգյավ ախչկան իտև՝ աշխար կան գյալ:

Խաբսխուրն էլ դանոցավ կնանց տուն: Արանբու լամուկ խարցուց, ասաց.

- Ու՞ր է խարս, խե ծե չի:

Ինոյին էլ ասին. - Խարս պիրենքյ չուր կես ճանմբանխ. կնանց ճյուր թանփելու. էլ ետ չտանոցավ. մենքյ էլ դանր փտոռիցինքյ. չկնդանքյ: Ջյուաբ տարանքյ խերանց տուն, ասինքյ զայիր տանոցե ետ կնանցե, խո էն տեղն էլ չէր. մենքյ էլ փեոր փոշման տառցանքյ ետ էկանքյ:

Արանբու լաճն էլ որ էսա խաբանր լսանվ, էլանվ մեկ անրանբու սև անթրոցըմ պոնեց ուր ծեռ. ինգյանն աշխար. երկրե-երկիր, ման էկավ ախչիկ կնդնելու խամար. խինքյ անջեբա ախչիկ դանր կնանց. դանր մտավ:

Մենքյ խանբանր պիրենքյ ախչկան մոտ: Ախչիյն էլ, որ էլանվ սեիս թակավորուն, ընկուն կշախեր ծիյայիտերաց. ընկուն անմանգ կուտեր, ընկուն կճրեր, կթիմրեր. որ ո՛չ թակավոր, ո՛չ ուր լաճ. իսկի չին կիտե, թե ի՞նչ գյանխ եմ կուտա ծիյայիտերաց. ի՞նչ գյանխ կճրի, ինոր արած պաներ, ինոր ծի շախել, մարթ չէր կիտե. թե ի՞նչխ կաներ, ի՞նչխ չէր էլնե:

Օրմ թակավոր ուր լաճ ասին. - Իսա սեյիս ինչ գյանխ եմ կուտա ծիյայիտերաց, կճրի. կթիմրի, որ ոիչ մեյ մարթ չիմնան:

Լյան կնացին ծիանքյ տիսնալու. ասին. - Տիսնանքյ խենք ծիանքյ խորոտ շախե՞ր ի. թե՝ չէ:

Էն գյախ որ ծիանքյ տեսան. ծիանքյ ըսկում ին խորոտկցի. որ էլ ծի մ'ասի, մեյ պամ ասա:

Ծեռ որ կուտան ծիյայիտերաց քյամկներ, ծիյանքյ կկատղեն, քյամկներ կխասնի չում ամիքյ. ոտքեր որ կզանին գյետին. կրալ պոց ոտկներաց տկեն կթոնի:

Թակավոր ասաց. - Էսա կանդար տարի ես սեյիս ի պոնե. էսա սեյիսի չարեքյ չին աձե: Ծատ խավնան սեյիսին. շատ էլ գյեռվացին, էն կանդար. որ սեյիս ծիյանքյ խորոտ էր պախե. էն կանդար. որ թամիզ էր պախե:

Մնաց օրմ ծին ախչկան ասաց. - Վաղ առատուն կիշրով շոտ էլի վեր. ծիյայիտերաց եմ տու, տար ճրի. պե թիմրի. մեյմեկ ուր տեղ կապի, եմ թալ առճվներ, տյու քյո մարթու խալվներ խան, ախչկան խալվներ խագյի, շոտ կնա լվանցվի. սանդրվի. տեղ տիր աչկերդ, խորո մաքրվի, արե նստի խետ իմ կողին. քյո թև տիր վեր իմ քյամկին, թիկնի վեր զի, քյո աչկեր խփի խորոտ, քյուն դիր վեր քյեն, էն գյանխ թակավորու լաճ պիտի գյան մեչ թավլային ֆռա՝ ծիյանքյ տիսնալու խամար, պիտի ֆռա գյան քյե տիսնա: Էն գյանխ թակավորու լաճ խե քյե պիտի սիրահարվի. պիտի ոտ զանի քյո ոտաց տակ, որ տիսնա տյու ախչիկ ես, պիտի ասի. թե. - Հե՛յ գիտի, փուշտ ադաբսզ, օոոսպի դել. դեմաք տյու ախչիկ իր, մարթու խալավ իր խագյե, էկիր իր էլիր իր իմ խոր տան սեյիս: Հանմանն տյու սութ քյուն տնես վեր քյի, իսկի ծեն չխանես, իսկի խա-չէ չանես: Էն գյանխ թակավորու լաճու խելքյ պիտի էրթա: Հանման տյու վեր էլի. ճյուր զանկ իրես, տեսակ արա, խելքյ պե վերեն. մե մեկու կտիսնաքյ, էն կթոնի, կէրթա: Էն գյանխ երփ որ էն կէրթա. տյու էլմ քյո ախչկան խալվներ կխանես, քյո մարթու սեյիսութնի խալվներ կխայնես, կբաշլայես քյո գործ անել. ինչխ որ ասի, տյու ըսկուն անես:

Ախչիկ ծիյու ասածին պես. առատուն շուտ կէլնի վեր. ծիյանքյ կտանի կճրի, կթմրի. մեյ մեկ ուր տեղ կպիրի, կկապի, եմանգյ կպիրի կթանլի առճվներ, կուգյան կխալվափոխվի. ուր ախչկան սերսուփ խալվներ կխայնի, կէրթա թանմիզմ կլվացվի, կսանդրվի, կուգյան աչքեր տեղ կտնի, կուգյան կնստի ուր ծիյու կուշտ. թև կթանլի վեր ծիյուն, ծիյու ասածին պես կթիկնի վեր ծիյու կողին: Աչքեր կխփի խորոտմ, սութ քյուն կտնի վեր ուր:

Թակավորու լաճն ի, կուգյան թանվլու մեչ կֆռա. ծիյանքյ բիթուն մեյ մեկ կաչկի, որ տեղ որ սեյիս կփտոի, սեյիս չկա, կասի. - Ջա՛նմ. էս մեր սեյիս էս օր ո՞ր տեղն ի, չէրևա: Կֆռա կուգյան ախչկան մոտ, կտիսնա. որ խուոնիկ-խրեղեն ախչիկմ պառկեր ի, թիկնե վեր ծիյու քյանմկին, քյնե, ոտ կզանի ախչկան ոտաց օրթալաղ՝ ռեյ գյիդի փուշտ ադաբսզ, կասի, դեմաքյ տյու ախչիկ իր, լաճու խալավ իր խանգյե, իկիր իր էլիր իր իմ խոր տան սեյիսն:

Որ թամաշա կանի ախչկան խորոտկութնին՝ ճրաքի պես կվանովի, ռանման թակավորու լաճու խելքյ կէրթա, կինի դան:

Էն էլ կէլնի ճյուր կպիրի կզանի թակավորու լաճու իրես, տեսակ կանի, չում խելքյ կպիրի վերեն:

Թակավորու լաճ կէլնի կնստի, մեյ մեկու խետ քյեֆ, շախկա շեյլինգյ կանեն, մեյ մեկու կխավնեն, վարռասալի վեր մեյ մեկու կսիրահարվին:

Թակավորու լաճ փայխից կէլնի տյուս, կէրթա տուն, ուր մոր կասի, թե. - Մե՛ր, սեյիս ախչիկ ի. չյունքյի չում էն օր կիտին. թե էնուց սեյիս մարթ էր. ոչ մեյ մարթ չէր կիտի. որ էն ախչիկ էր, - մոր կասի. թե. - Ես պիտի առնեմ էսա ախչիկն:

Թակավորու լաճ որ կասի մոր՝ սեյիս ախչիկ ի. մեր չավատա. կասի. - Սու թ ի. տյու յանիշ ես. կարելի էի ուրիշ ախչիյմ ի իկե. պառկե մեր փայխի մեչ:

- ՉԷ, - կասի. - ես մնյանի կիտեմ. որ մեր սեյիսն ի էլե ախչիկ:

Կմնա էն մեկէլ օր իրիկուն ծին էլմ էլ ախչկան կասի. - Վաղ առատուն առանչվա պես էլմ շոտ կէլնես վեր, ծիյանքյ կթմրես. կճրես, եմ կուտաս. էլմ կխալվափոխվես. կսանդրվես. կմաքրվես. ախչկան կլըղ կդանոնաս. կուգյնս կթիկնես վեր իմ կողին: Համա շոտ անես քյանի մեյ մարթ չիկե փնարգյախ տիսե. ըստհախ պիտի թակավորու կնիյ գյա. թավլիի մեչ ֆոա, պիտի գյա քյե տիսնա. խասկնա ինքյ՝ տյու ախչի՞կ ես. թե՞ չէ, ուր լաճու սութ աղորթ խանելու համար: Համա տյու էլմ քյո աչքեր կխփես. սութ քյուն կտնես վեր քյե. էն ի՞նչ կանդուր որ քյե ծեռ կուտա. քյե կոնթի. քյե փուշտ օոոսպի կասի. թե տյու ի՞նչխ ես իկե ըստեղ. վերչ քյո պերան կխոտոտա. քյո ակընշներ կխոտոտա. քյե ինչ որ կանի. տյու հիչ էն տեղրանքյ չէլնես, սութ քյուն տնես վեր քյե. չուր թակավորու կնիյ կէրթա: Թակավորու կնիյն կէրթա: Թակավորու կնիյն էրթալուն պես. տյու կէլնես էլմ էլ կխալվափոխվես, կէլնես լաճու կլըղ, կէրթանս խետ քյո գործին: Էն օր պիտի թակավոր ուր կնիկ քյե պիտի կանչեն. տեսնան. նշանին ուրենց լաճու խամար. ինչխ որ ասի. ըսկում անես:

Կմնա չուր առատուն. ախչիկ շուտմ կէլնի վեր, ծիյանքյ կտանի կճրի. կթմրի, կպիրի մեյ մեկու տեղ կկապի. եմ կուտա, շոտ կուգյա, կխալվափոխվի. կէլնի ախչիկ, կլվացվի. կմաքրվի, ծամեր կսանդրի, աչքեր տեղ կտնի. կուգյա, կթիկնի վեր ծիյու կողին, աչքեր կխփի, սութ քյուն կդնի վեր ուր:

Թակավորու կնիյ կուգյա ներս, մանխսուս քիչմ ծիյանքյ կաչկի. կֆոա. կուգյա ախչկան մոտ, կտեսնա, որ խուոնի-խրեղեն ախչիկմ, աչքեր տեղուկ, ծամեր սանդրուկ, թամիզ խորոտ. թիկնե վեր ուր ծիյու կողին, քյնե:

Թակավորու կնիկ ուր ոտնով կզանի ախչկան էրկու ոտաց օրթալաղ. կասի. - Օոոսփյի դել, տյու որտեղի՞ց ես իկե մտե ըստեղ. էսա քյո արած ի՞նչի:

Կբաշլայի ախչկան թամաշա անել, պերան մերան կխոտոտա. ակնշներ կխոտոտա. կտեսնա. որ ախչիկ լաճու ասածին պես շատ խուոնի-խրեղեն. մաքուր ախչիյ մի: Խորոտ թամաշա կանի, ախչիյն էլ հիչ էն տեղրանքյ չէլնե. չում թակավորու կնիկ կթոնի, կէրթա:

Թակավորու կնիյ որ կէրթա, էն շոտ կէլնի. էլմ ուր ախչկան խալվներ կխանի, լաճու խալվներ կխայնի, կէրթա խետ ուր պանին:

Էն կեսօրին թակավոր ուր կնիկ կկանչին սեյիսին, կտանին ուրենց մոտ. կբաշլայեն խետ խանքան տալ, կասեն. - Սեյի՛ս, տյու խոտնի խրեղեն ախչիյմ ես. ափսոս չի՞ր տյու էկար էլար սեյիս:

Էնգյախ ախչկան մարթու խալվներ կխանեն տյուս. ուր ախչկան խալվներ կխագյուցեն, կնշանեն վեր ուրենց լաճուն:

Կասեն. - Էլ տյու պիտի սեյիսութեն չանես:

Ուրիշ սեյիսմ կպիրեն, կտնեն ծիյայհտերաց անանճ:

Ախչիկ էն օր կէրթա մոտ ուր ծին: Ծին ինոր կասի. - Տյու մեզնից ծեռ քյանշիցիր, չյունքյի թակավորու լաճու խետ կփսայվես: Հանման կխնթրեմ, որ տյու զի չմոոնաս, ուրիշ սեյիսի ումուտին զի չթողնես, քյո ծեռնով գյանս եմ տաս, ճրես, թմրես, որ ես քյե հան խասնեմ. ինչխ որ հան խասիր եմ, թե որ զիկ մոոնաս, զանրանր կքյուշես:

Խարսնսի պատրաստութեն կտեսնան, ախչիկ կփսակեն վեր թակավորու

լաճուն. քյեֆով ուրախութնով. յոթն օր յոթ կիշեր խարսնիս կանեն. կուտեն. կխմեն. չում էնոնց խարսնսից կպոծնեն:

Ախչիյն ի, որ կինի մեչ ուր քյեֆ ուրախութնին թակավորու լաճու խետ կմոռնա. ծին. մտախան կանի. էլ ծին իսկի ուր միտք չպիրե. չում տաս-տասնխինգյ. քսան օր կմնա: Մեկ օր բիրդան ծին կինի ախչկան միտ. կասի՝ էրթամ իրիշկաս. խենքյ իմ ծին ի՞նչ հանլի մեչ ի: Զունքյի թակավորուն ասիր էր. թե քյո սեյիսին ասա. որ իմ ծին ուր տեղեն չփոխի. մեկէլ ծիյայիտերաց խետ խորոտ շախի պախի. խորոտ նմ տա. իմ ծին ափսոս ի:

Էն գյանխ որ կէրթա կաչկի. կփտոի որ ուր ծին թակավորու ծիյայիտերաց մեչ չի: Կէրթա էն վիրին պուճախ կաչկի. կտիսնա, որ ուր ծին տարեր են կապեր են խավերաց թառի տակն. խավեր ըսկում են ծոտե իկե վեր ծիու քյամկին. որ ծիու քյամակ իրեքյ թիզ կոթմաւ ի պոնե: Կեխտոտվե. խարամվե. ասնութի. ծարավ. էնտեղ քիչ ի մնացե. որ խատնի խեղճ ծին:

Էն գյախ ախչիկ կխղճա վեր ուր ծիուն:

Ծին կասի. - Հե՛յ. խողածին. ես քյե ասի, ինչ կանղար քյեֆ ուրախութնի մեչն էլ էլնես. զի չմոռնաս. տյու ի՞նչ կանդնար որ նեղության մեչ ինգյանր. ես քյե ազատեցի. հմեն պանն էլ ես քյե սովրցուցի. ամա տյու էսավուր օր որ փսայվար վեր թակավորու լաճու. ինգյար քյեֆ ուրախութնի մեջ. զի մտախան արիր: Զասիր. թե մեյ խատ էրթամ. խեմ՝ իմ ծին ի՞նչխ էլե. ի՞նչ կնացե: Էսավուր օր զի կապեր ին էսա խավերաց թառի տակ. խավեր կծոտեն վեր զի վիրանց: Իմ տակն ո՛չ ավիլող կա. ո՛չ սերսփող կա. ես մնացեր իմ ընանա: Աստված արդար տնատաստան ընանա՞ էի, որ ես էն կանղաւր աղեկություն արի քյե. տյու էսավուր օր խասար քյո նպատակին. զի ծեռաց թողիր մոռցար: Զէ՞ որ ես ի քյե խասուցե քյո նպատակին. տյու ինչի՞ ընանա անխղճութեն կանես խե զիկ:

Ախչիկն էլ ուր ծին էն տեղեն աոցկեց. տարավ մեկ սերսուփ տեղմ կապեց. եմագյ իտու. կշտացուց. առեց. կնաց. ճրեց. էն ուր քյամկի կեխտեր լվաց. թիմրեց. սերսփից. ծամեր սանդրեց. իպե ուր տեղ կապեց:

Ըստրիս հմեն օր առաճվան պես ախչիկ կէրթեր ուր ծին կուչկեր. կշախեր. էլ չէր թողնե սեյիսի ումուդին:

Ծին էլ մեկ օր ասաց ախչկան. - Ութ օրից սորա քյո իրիկ ֆիլան քյաղքյից պիտի կանչեն. տանեն էնտեղ. ասեն՝ արե էլի մեր երկրի թակավոր: Էն գյախ թակավորու լաճ քյե պիտի ասի՝ քյո ծին տուր ես խեծնեմ էրթամ. հանման տյու զի չի տաս. թե որ շատ էլ կզոռի. չես կանա էնոր խոսքի տեմ առնես. որ զի կուտաս. ասա՝ չելնեմ. չիմանամ. որ իմ ծիյու ոտքեր քյեռստանկ չտնես. ասա՝ չյունքյի ես իմ ծիյու ոտքեր իսկի քյոստանկ չեմ տրե:

Ութ օր որ կթմմի. ծիյու ասածին պես. խնբանր կուգյա թակավորու լաճուն. թե՝ արե մեր երկրին էլի թակավոր:

Թակավորի լաճն էլ կէլնի մեչ թալվին կֆոա. որ ծին որ կիրիշկա՝ նվազուկ ի. որ ծիյու քյամկին որ ծեռ կուտա. ծիյու փոր կտպնի գյետին. ծիյանքյ բիթյուն նվազիր են. մնացիր են: Լն ծիյուց կնցնի մեկէլ ծին. կասի՝ խենքյ ո՞րն զի հարմար ի. որ ես խեծնեմ էրթամ: Որն որ կիրիշկա հասաբ արա բիթյուն էլ խատուկ են. վարհասելի մեկ ծի ուր խամար հարմար չտիսնա: Կէրթա չում ուր կնգյանն ծիյու մոտ. էն էլ կաչկի. կտիսնա. որ հմենի խորոտ պատվական ծին էն ի: Հե՛յ հաք. կասի. էն օր որ իմ կնիյն էր ծիյայիտերաց սեյիս. ծիյայիտերաց ոտնից կրայ կթոներ. փուճ էլնի էսա սեյիս. որ մեկ ամիս ի իկե. մեր ծիյանքյ բիթուն խատուցե.

էլ ըսկում սեյիս իմ խեր ո՞րտեղից պիտի կնղնի. որ իմ կնգյուն պես խորոտ ծի շախի:

Կասի. կէրթա ուր կնգյա մոտ. կնկյան կասի. - ես կէրթամ էն երկիր. որ զի կանչիր ին. համան կուզեմ որ քյո ծին տաս ես խեծնեմ էրթամ. չյունքյի իմ խոր ծիյայհտերաց մեչ մենակ քյո ծին զի հարմար տեսա:

Կնիյն էլ շատ կզոոի. կասի. - Ես իմ ծին չեմ կանա տուս. ո՛չ իմ ծին կաբյուլ կանի. ոչ ես կաբյուլ կանեմ. որ տյու իմ ծին տանես:

Շատ կզոոի. համան փարա չանե. կասի. - Զէ՛. չէլնի. իլնյի պիտի տաս ծին. որ ես խեզնեմ էրթամ:

Էն էլ կասի. - Շատ աղեկ. ես իմ ծին կուտամ. համուսն մեկ պուսն կխնթրեմ քյեզնից. որ չէլնեմ չիմանամ իմ ծիյու ոտքեր քյեոստակ տնես:

Էն էլ կասի. - Շա՛տ սուղեկ:

Ծին փայխից կքյաշի տյուս. կխեծնի. կացպարով կանի. կէրթա. քյաղքյից որ կէլնի տյուս. մեյ խատ ըսկուն զանգյու կզանի ծիուն. որ էն օր ինչ ծին ծնիր էր ուր մորմեն. ըսկում սարսափելի զանգյու չէր կիրե մեչ ուր կյանքին:

Զանգյուն զանելուն պես խրեղեն ծին էր իսկի ըսկուն պան չէր տիսե. էնգամ. որ կտիսնա. կթոնի խետ իրկնուց իրիսին. կէճնի տակ:

Սարսափ թակավորու լաճուն կպոնի. էլ ինչ որ կանի չկանա ծին զաֆթե. չկանա ծիյու դիմացն առնե: Չյունքյի սարսափելի զանգյու եի զարկե եա: Ծին էլ կատղեր ի. կուզի իյնել ուր խեծնողն էլ թալսաֆ անի՝ էն զանգյուն զանելու ինատուն:

Թակավորի լաճն էլ. որ չկարցավ ծիյու դիմացն առնել. շատ բոուց. շատ հավար արաց. ասաց. - Ասու սիրուն. խասեքյ. էսա ծիյու դիմաց մեյ խատ կտրեքյ:

Ըստեխ էն տեխ լսան. էկան ծին պոնեցին. թակավորի լաճն էլ. որ ծին պոնեցին. էճնվ տակ ծիյուց. էն գյանխ քյեոստակ իտիր ծիու ոտկեր: Շան որդին խեծուվ յավաշ-յավաշ ծին քշեց կնանց:

Շատ կնանց. թե՝ քիչ. ախչկան խեր. որ ինգյիր էր ախչկան իտև ման կուգյեր. թակավորու լաճուն ոաստ էկավ. ասաց. - Պանրև քյե. ախպեր ջան:

Ասաց. - Ասսու պանրին:

- Տյու որտեղե՞ն կուգյուս. որտե՞ղ կէրթանս:

Թակավորն ասաց. - Հե՛չ վալս. ճանմխորթ եմ. ինգյեր եմ աշխար՝ խետ իմ դանրդին ման կուգյանմ:

Ախչկա խեր երփ որ էդա ծին տեսավ. շփանյի կնանց. թե՝ էսա իմ ախչկա ծիյուն կնմանի:

Քիչմ կայնավ. դանոցավ մտուսեց. թե՝ ջանմ. յան էն ի. յան էն չի. մանր իմ ախչկա ծիու պես էլ ծի չկա մեչ դյունեին:

Էն ընցավ կնանց խետ ուր պանին. թակավորի լաճն էլ շատ կնանց. քիչ կնանց. անրանբու լամուկ որ ինգյիր էր ուր կնիյ կփտոեր. էն էլ թակավորու լաճուն ըոաստ էկավ: Երփ որ ծին տեսավ. ասաց. թե՝ էսա ծին իմ ճշանլվեի ծիյուն կնմանի. կա չկա իմ ճշանլուն էսա տեղրայհտերաց ես պիտի խանեմ տյուս. դոր էլնի. դոր չէլնի. մայան ըստեղրանքյն ի:

Անրանբու լամուկ պսրև իտու թակավորու լաճուն:

Թակավորի լաճն էլ ասաց. - Ասսու պանրին, - ասաց, - երիտասարթ անրանբ, ո՞ր տեղեն կուգյաս, դանր կէրթանս:

Ասաց. - Ճանմխորթ եմ. ինգյիր եմ աշխար ման կուգյանմ:

Թակավորու լաճն էլ, որ տեսավ սրաբու լամուկ երիտասարդ էր, ասաց. - Ես կէրթաս ֆիլան քյաղաքյ. կէլնես թակավոր. տյու չե՞ս իգյա խե զի. քյե անեմ իմ ճառաճ փոսդմնջի:

Ասաց. - Կուգյմմ. ի՞նչի չեմ իգյա, ես էլ զաթե ըսկում պան կուզի. որ անեմ ապրեմ:

Առեց ճրաբու լամուկ. խետ ուր տարավ չում էն քյաղաքյ: Նստավ վեր ուր թանթին. ուր թակավորութեն բաշլայեց. ճրաբու լամուկ էլ էնոր փոսդմջին էլնելով ճար կաղըմ նամակ կտաներ. կպիրեր:

Օրմ թակավորու լաճ նամակմ իտուր ճրաբու լաճուն. ասաց. - Էսա տար ֆիլան քյաղաքյ տու մեր տուն:

Արաբու լամուկն էլ առեց նամակ, կնաց: Չում խասավ թակավորու լաճու քյաղաքյ. տարավ նամակ իտու ինոնց տուն:

Թակավորու լաճու կնիյն էլ ջուխտմ ոսկե կոչոր խուտնի խրեղեն լաճ ի պիրե, որ մարթ չուտի, չխմի, թամաշա անի թե՛ մոր. թե՛ տղեյներաց:

Արաբու լամուկ. էն գյանխ որ թակավորու խարս կտիեսնա, կճանչնա, որ ուր նշանլուն ի՝ ճե՛յ ճաք. կասի, իմ նշանլուն կնդն. որ կնդաս:

Թակավորն էլ կէլնի կգյրի, մեչ նամակ ուր լաճուն կասի. թե «Աչքտ լեոս. ին օր, ին ամիս թմմելուն պես քյո կնիկ ջուխտմ ոսկե կոչոր լաճ ի պիրե, իսաս նամակով ճոչ ավիդիս կուտանքյ քյե. որ լսեր ուրախնաս: Թե որ մե կխարցուցես, փառք տիրոջ. մենքյ սաղ սանլաթ ինքյ. քյեոֆ մեր քյեոֆն ի»:

Էսասկնն կգյրին մեչ նամակին, կթանլեն մեչ ճրաբու չանթկին. կասեն. - Դե՛. շոտ տար խասու մեր լաճուն, որ առնի նամակ ուրախնա:

Արաբու լամուկն էլ կուգյն կես ճամխուն նամակ կխանի. կկարդա, որ ըսընա եի գյրուկ, նամակ բիրանդի կկեղծի: Ուր ծեռնով ուրիշ նամակմ կգյրի թակավորու լաճու խոր. մոր պերնով, թե «Էն կնիկ. որ տյու առիր. օոոսպի ճդնքսըզ մեկն ի. մեր շենքյի մեչ որ էրկու դուտ կպաւցվի՝ մեյ վեր. մեյ ցածր, էն առատմե չուր իրիկուն, կիշեր ցերեկ. մեյ դոնեն մարթ կպիրի, էմեկէլ դոնեն կխանի. մենքյ ինչ կանդնար որ կասենքյ էսա օոոսպութեն թանրկի. խերիքյ ի անես. ճիչ մե ականջ չանե. մե շան տեղ չի դնե: Ալյ թող զէն. էրկու խատ խարամ շան լակոտ ի պիրե. որ գիշեր չում լիս նվնվոց-ճվճվոց կդնեն խե. չեն թողնե. որ մենքյ մեյ թախկա քյնինքյ»:

Արաբու լամուկ ըսսնն կգյրի. կդնի մեչ ծրարին. պերան կկոծի. կտանի կուտա թակավորու լաճուն:

Թակավորու լաճն էլ նամակ կպանա. կկարդա. ըսընես գյեշ ջուաբմ կլսի: Թակավորու լաճն էլ մեչ նամակին կգյրի. թե «Ադնքսըզ կէլնի. շան լակոտ կէլնի, ինչ-որ կէլնի թող էլնի. իմ ընթուկն ի, շախեքյ, պախեքյ չում ես կուգյմմ»:

Էսասկնն կգյրի կուտա ճրաբու լամկուն. կասի. - Ա՛ռ, կնա տար իմ խոր:

Արաբու լամուկն էլ նամայ կտանի. ճամբանխ կպանն. կկարդա. կտիսնա. որ թակավորու լաճ ըսընա ի գյրե. նամակ բիրանդի կկեղծի:

Թակավորու լաճու պերնով ըսնա կգյրի. «Իմ կնիկ շոտ խանեքյ, մլեքյ տյուս տնեն՝ խետ ուր լաճերաց, չէլնեմ. չիմանամ, որ տուն թողնեքյ»:

Արաբու լամուկ ըսնն կգյրի. կտանի կուտա էնոնց տուն:

Էնոնքյ էլ, որ նամակ կպանան կկարդան, կտեսնան, որ ըսնա եի գյրուկ. սաստիկմ կզարմանան. մեկ մեկու կզրուցին. թե. - Ջա՛նմ, մենքյ գյրեցինքյ մեչ նամակին. թե քյո կնիկ ջուխտմ ոսկե կոճոր լաճ ի պիրե. որ էսա պանրի ջուաբ առներ ուրախներ. էն էլե գյրե մեչ նամակին, թե շոտմ մլեքյ տյուս:

Կաւսին. թե էսաւ ի՞նչ պատճառ ի. որ ըսըսնա գյրերի:

Ձյունքի էնոր կնիկ գյեշ պամ չարեր ի. մենքյ հեչ հանցաւնքմ վեր էնոր չենքյ տիսե. իսա ի՞նչ հաշիվ ի:

Կէլնին նամակի մեչ կգյրին. թե. «Մենքյ քյե պաւրի ակնելկա տվինքյ. աչք լեոս արինքյ. որ տյու ուրախնիր. թոդ զուրախնայ. էլաւր ըսըսնա գյրիցիր: Մենքյ քյանի որ կաբահաթմ չենքյ տիսե. էն հիչ մեր տան մեչ չուր մկա սխալութեմ չարե. գյեշ պա մը չենքյ տիսե էնորից. մենքյ ի՞նչխ անենքյ անաստվածութեն. առանց մեկ կաբանիաթմ անելու խանինքյ տնեն. մլենքյ տյուս. ոչ աստված կաբուկ կանի. իսկի չի հար քյաւշ տիսնող գյիտին չթքյի. մեչ մեր իրիսին կթքյի. թե՝ ծեր խարս ի՞նչ գյեշութեն էր արե. որ տյուք մլիցիքյ տյուս. պիտի խարուցեն: Մենքյ էն գյանխ հար քյանշին ի՞նչ պատասխան տանքյ. որ մեր թակավորական նամուս ազանտենքյ ամոթանքյից»:

Էսասկնա կգյրեն մեչ նամակին. կուտան արաբու լամուկ կտանի:

Արաբու լամուկն էլ ճանմբանխ նամակ կպանա. գյինա կկեղծի. կգյրի էսասկնա թակավորու լաճու խոր մոր պենով. «Մենքյ չենքյ կանա քյո կնիկ մլե տյուս տնից. շոտ քյէլե արե. քյո կնգյանն մեյ ճար արա. մենքյ էլ չենքյ կանա քյո կնգյանն դանդ քյանշե. մե մրկեց. իրիցեց. խերի՞քյ ի»:

Էսասկնա կգրի լամուկ. կտանի կուտա թակավորու լաճուն:

Թակավորու լաճն էլ որ կկարդա. թե ըսըսնա գյրուկ ի. էն էլ կէլնի մեչ նամակին կգյրի. «Թե որ տյուքյ շատ իմ կնգյանն մոտից տյուս եքյ. իմ քյոլֆթից ընցիր եք. ճեռկ տանմ մեչ տրեքյ. էն տեղ էնոր շախեքյ. պաւխեքյ. խետ ուր տղեյներաց. չում ես կտաւոնանմ վեր իմ կնգյանն. էն գյանխ ես կիտեմ ի՞նչ կանեմ. ինչ չեմ անե»:

Էսասկնա կգյրի. կուտա արաբու լամկուն. կասի. - Ծիտ տար տուր մեր տուն:

Արաբու լամուկն էլ նամակ կառնի կէրթա. նամակ կխաւնի. կկարդա. կտիսնա. որ ըսըսնա եի գյրուկ. գյինա նամակ կկեղծի: Թակավորու լաճու պենով կգյրի. թե. «Քյանի էն կնիկ. որ մեչ էն տան ի. խետ էն շան լակոտներաց. ես էն խոր խաթան պիտի չտանանամ. պիտի ոտ չկոխեմ. էլ տյու կիտեքյ՝ կկուրիսուցեքյ. կթողնեքյ»:

Էսասկնա կգյրի. կտանի կուտա թակավորու լաճու խոր մոր:

Էնոնքյն էլ որ կկարդան, կասեն. թե կերնա մեր լաճ ծոեր ի. ուր խելքյ թանլեր ի. թակավորու խարսն էլ կիտի. որ արաբու լամուկ մեչ իրիկ մեչ կնիկ էսասկնա սաղանութենմ ի կանի. համան իսկի ծեն չի խանե. հիչ էս տեղրանքյ չէլնե:

Արաբու լամուկ կտաւոնա կէրթա մո թակավորու լաճ. թակավոր ուր կնիյն էլ կմտածին. թե մեր լաճ որ հա ըսըսնա կգյրի. ի՞նչ անենքյ. ի՞նչ չանենքյ. կասեն. թե որ խանենքյ. մլենքյ տյուս. մե խամար ճոչ ամոթանքյմ ի. աշխար բիթյուն պիտի մե մեղադրեն. թքյեն. մրեն. որ ըսկուն ի պերենքյ ուրիշ պամ անենքյ. ուրիշ խաղմ խաղանքյ մեր խաւրսի գյլոխ. ըսկում որ մարթ չիմնա: Էրթանքյ փետեր. կոճեր շարենքյ էնատեղ. մեչ ուր էրկու տղեյներավ տնենքյ էն փետերաց օրթեն, պիլոր-պիլոր կրայ տանքյ քյամկին: Թո վառվի ոյն ուր. չուր մեչ կրակին վանվի. էլնի քյոլ:

Կտանեն. փետեր կշարեն. խեղճ ախչկան էրկու տղեյներաց խետ մեյտեղ կթալեն մեչ. փետեր կկրակեն. կթոնեն կէրթան: Փետերն էլ պիլոր-պիլոր կվանվին. քիչ կմնա. որ կրայ խասնի խեղճ ախչկան խալվներ:

Էն գյանխ որ ախչիկ կինի մեչ էն նեղութենին խետ ուր էրկու տղեյներաց. էնոր

ծին թակավորու լաճու փաւյխի մեչեն կիմնաւ. որ ուր տեր սաստիկ նեղության մեչ ի. էն գյանխ ծին ուր կկտոտի. կուզի որ էրթա տիրոջ օքնության. համան ճանմբանխ չկաւ. դոներ շինուկ ին. կապն էլ չի կանա քյակե: Ծին ի կթոնի ասոիքյ. կէճնի գյետին. գյետին կքյակի. կփորի. կմտնի մեչ խողերաց. խող մոխիր կուտա վեր ուր. թոզ դուման կիսկի դանրբար: Քյփ քյփայ. դմդսփոց կիսկի դանրբար:

Սեյիս որ տսանց կլսի էդա ծիու կանլաբանլխ. կասի. - Մեյ խատ էրթամ փանգյանխ խենքյ ի՞նչ կալաբալխ ի. էսա ծիանքյ փոթիր ին. կկովին, էս ի՞նչ ի աջեբա:

Փայխի տուտ որ կպանա. կտիսնա. որ ծին սաստիկ ուր կկոտորի. կիրիշկա՝ ինչ կիրիշկա. ծին գյետին իրեքյ գյազ փորեր ի. մտեր ի մեչ խողին: Սաստիկ ուր կկոտորի. կճարտի: Կասի. - Ջա՛նմ, էսա ծին սանջու էի. ի՞նչ բաս ի:

Ծին մսրից կաոցկի, յուլար կպոնի ծեռ, որ ծիուց պամ խասկնա. ծին ի ուր կկոտորի. յուլար սեյիսի ծեռաց մեչեն կփոցուցի. կէլնի տյուս: Էղելուն պես. թևավոր խավքյու պես տաս աղըմ կանի մեկ. թև կառնի կթոնի՝ չուր կխասնի թակավորու խարսի մոտ: Կտիսնա. ի՞նչ կտիսնա՝ ուր տեր թանլիր են մեչ կրակին. կրակ սաստիկ կվառվի. մեկ մազարաթ ի մնացի, որ տիրոջ ջան վառվի խետ ուր էրկու տղեյներաց:

Ծին էլ կասի. - Հե՛յ խողաձին. ի՞նչխ ի տյու զի կմոռնիր. քսան օրով միտ չիր պիրե. էս օր ես քյե էսա նեղության մեչ իմանալու պես. ահագին զատ տեղեն թոիր եմ, չուր խասիր եմ մո քյե. որ քյե ազատեմ:

Ծին կմոտանա կրակին, գյլոխ կկոոի մեչ կրակի պոցին. կասի՝ քյո էրկու տղեյներ զար քյո ունթ. մեյ ծեռնով պոնի. մեկէլ ծեռնով թալ իմ բոչանմ պոնի, քյե խորոտ ուսուրբով թալ վեր իմ վզին. համան ըսկուն թալես, որ չէլնի թե տյու, թե քյո տղեյներ փոթնեքյ խեքյ մեչ կրակին:

Ախչիկ ուր էրկու տղեյներ կզանի մեկ ունթ. մեկ ծեռնով կպոնի. մեկէլ ծեռնով կթանլի ծիյու բոչամ կպոնի, ուր կայիմ կթալի վեր ծիյու վզին: Ծին էլ ուր գյլոխ կպանցրացուցի, ախչկան կթանլի. կէրթա վեր ուր քյամկին. էն ուր էրկու տղեյներ կտնի ուր գյոք. կխեղրանա վեր ծիյու քյամկին, ծին թևավոր խավքյու պես ախչկան կառնի կթոնի: Ծատ կէրթա. քիչ կէրթա, մեկ խեղրան տաշտի մը մեչ կկայնի:

Ախչիկ ծիյուց կէճնի տակ, ծին ախչկան կասի. - Տյու նստի էսա տեղ խետ քյո էրկու տղեյներաց. ես կէրթամ էնա տեղ կինեմ մեչ էն ծորին. կխատնեմ, ամա տյու իմ վիզ չկտրես. մենա թե չախուն թալես. իմ փոր կճղես, իմ փորի ցին-մին. ախքյներ-պաներ տանես թափես մեչ գյետին. թո գյետ տանի էրթա. էնորից սորա տյու առ քյո էրկու տղեյներ, մտի մեչ իմ կողաշարերաց. խանգյիստ քյնի չում առատուն:

Ասածին պես ծին կէրթա, կինի մեչ ծորին, էն տեղ կխատնի: Ախչիյն էլ կէրթա ծիյու մոտ կասի. «Իմ ծին ինչխ որ զի պատվիրեր ի, թե չմորթես, որ ըսկունի, ես էլ չեմ մորթե, փոր պիտի ճղեմ, ինոր ասածի պես անեմ»:

Չախուն կթանլի փոր կճղի, ինոր աղքյներ-պաներ փորի խետ մեյ տեղ կտանի կթափի մեչ գյետին, կուգյա կառնի ուր էրկու տղեյներ. կմտնի մեչ ծիյու կողաշարերաց: Ծատ կուլա. շատ էլ կցավա, կասի. «Ափսո՛ս, խազար ափսոս, որ մեռավ իմ խրեղեն ծին»:

Ամա լաց աղաղակ իզուր էր. խեղճ ծիյու կյանք վերճացեր էր:

Սեյիսն էլ էն գյախ. որ ծին ծեռնեն փոթանվ կնանց. բիրդանն կնաց թակավորու լաճու մոտ. ասաց. - Քյո ծին սաստիկ ուր կկոտորեր. ես էլ կնանցի փանգյանխ

աոցկեցի աչկիցի. ասի՝ տիսնամ խենքյ ի՞նչ էլի. ծին ուր գյնմ ծեոնեես խանեց. մեկ սնղըմ արաց տաս. թոավ. դեր կնաց՝ չեմ կիտե:

Թակավորու լաճ. որ լանվ ըսընանա. մտքի մեչ ասաց. թե. - Ամպատճառ իմ կնիկ մեկ նեղության մեչ ինգեր ի: Իմ ծին հինլբանթ կնացե էնոր օքնության:

Կէլնի. մեկ փետ կպոնի ուր ծեռ. կինի ճամբախ. կէրթա:

Ախչիկն էլ խետ ուր էրկու լաճերաց. որ կքյնի չում առատուն. առատուն արշալույսին. երփ որ կսկսի. ուր կտիսնա մեչ ճոչ թաքավորական քյեռշկ սարի մեչ: «Հեյ հա՛ք. - կասի. - Էսա իմ օղորմսած պատվական ծիյու կողաշարերն էր. էլնվ զի խամար քյեռշկ սարա. մեչ մեկ կիշերվան. փինոք քյե. աստված. ի՞նչ հիանալի հրաշքագործութեն էր»:

Շատ կմնա. քիչ կմնա. ախչկան խեր օրմ կուգյն էն տեղեն կընցնի. կտիսնա էղա տեղ քյեռշկ սարեմ կա. կասի՝ էրթամ ըստեղ հենքյ ի՞նչ քյեռշկ սարա եի:

Կէրթն ներս. ախչիկ խոր կճանչնա: Կառնի ներս. ամա խեր ախչկան չճանչնա:

Էնօրից սորա ամրաբու լամուկ կուգյն: Էն էլ կէրթն էնտեղ. էնորն էլ ներս կառնի. հնման ամրաբու լամուկ էլ էնոր չճանչնա: Ընֆաւ կտանի. ամա կասի՝ էն մկա թալնֆ արիր են: Քյանիմ օր կմնա. չմնա. թակավորու լաճն կուգյն. որ պիտի ընցնի. էդա քյեռշկ սարեն կտիսնա. կասի՝ աչեբա. էսա ի՞նչ քյեռշկ սարաս եի մեչ էսա դաշտին շինվե: Ես ըստեղեն շատ եմ ընցե. տաոցե. ըստեղ քյեռշկ սարա չեմ տիսե. մեյ խատ էրթնմ ներս. խենքյ վո՞վ կա:

Կէրթն ներս. ուր կնիյ կուգյն. կճանչնա. թե ուր իրիյն ի. հնման էն ուր կնգանն չճանչնա: Կառնի. կէրթն ներս. իրիկուն կնստեն. խանբանր կուտա - պատմություն կանեն. ախչկան կխարցուցե. թե. - Տյու վո՞ր տեղեն ես. ո՞ր տեղեն չես. ի՞նչխ ես իկե էսա քյեռշկ սարեն շինե էսա դաշտի օրթեն նստե:

Ախչիյն էլ կասի. - Իմ պատմութեն էրկեն ի:

Կէլնի դոներ կկոծի. կասի. - Ոչ մեկ մարթ տյուս չէլնի. որ ես իմ պատմութեն պատմեմ ձեզի:

Թակավորի ախչիկ ուր խոր ոճլի նաղարեն շինելուց չուր էսա տեղ մեկիկ-մեկիկ կպատմի. էն ժամանակ. որ էկավ խասավ ըստեղ. ախչկան խերն էլ իմցավ. որ էսա ուր ախչիկն էր. թակավորու լաճն էլ իմցավ. որ էսա ուր կնիկն էր. ամրաբու լամուկն էլ իմցավ. որ էսա ուր նշանլուն էր:

Էն գյնխ ամրաբու լամուկ ուր նամակներաց արած կեղծության խուսմար սարսափ ուր պոնից. ուզեց տյուս էլնել փախնել. ասաց. - Ցամա՛ն. ես շատ նեղվա. թողեքյ ես մեյ խատ էրթնմ տյուս գյնմ:

Ախչիյն ասաց. -Չէ՛. հրաման չկա տյուս էրթալու:

Ինչխ որ թակավորու ախչիկ թալիր իր մեչ կրակին. ըսկու էյ թակավորու ախչիկ ամրաբու լամկան իթնլ մեչ կրակին. վնոեց արաց քյուլ:

Էն ժամանակ թակավոր. ուր ախչիկ, ուր փեսեն շատ ուրախցան. իրեքյ մեյտեղ կանչեցին երկրի բազմութեն: Նոր թաղարեքյ տեսան խարսնիսի. նոր յոթն օր. յոթ կիշեր խար խարսնիս արին, կերան. խման. քյեֆով-ուրախութնով: Էնոնքյ խուսան ուրենց նպատակին. տյուքյ էլ խասնեքյ ծեր նպատակին:

Ես էն տեղեն էկա՝ մեյ կտոր էլ դաթլի չդվին. որ ես տնի վեր իմ կոպլին:

Երկնուց իրեքյ խնձոր էճավ. մեկ՝ ասողին. մեկ՝ լսողին. մեկն էլ ականջ արողիս: